	«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողի մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Աստղիկ Իսրայելյան

Ուսումնական հաստատություն՝ «Ալավերդու Ե.Չարենցի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց»

Բովանդակություն

1.Ներածություն——————————————————————— 3

2.Աշակերտի արժեհամակարգի ձևավորում——————— 5

3.Դասին ներկայացվող դաստիարակչական խնդիրներ——9

4.Ուսուցչի դերը արժեհամակարգի ձևավորման գործում—12

5.Եզրակացություն——————————————————16

6.Գրականության ցանկ——————————————————18

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Թեման բավական կարևոր է, քանի որ ճիշտ արժեհամակարգ ձևավորելը շատ կարևոր գործընթաց է: Դաստիարակենք արժանապատիվ, ազնիվ և հայրենասեր սերունդ կունենանք առողջ հասարակություն և պետականության ամուր հիմքեր, բաց թողնենք ճիշտ արժեքների սերմանումը, կունենանք վատ հասարակություն: Սա է պատճառը, որ արժեքային համակարգի ձևավորումը շատ կարևոր է: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական

առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների

Աշակերտի արժեհամակարգի ձևավորում

Որտ՞եղ,ինչպե՞ս և ո՞վ է ձևավորում աշակերտի արժեհամակարգ

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Դժվար է Հայաստանի ապագան պատկերացնել առանց համակեցության կանոնները պահպանող, կայուն արժեքային համակարգ ունեցող ,էթիկական դաստիարակություն ստացած քաղաքացու:Հաշվի առնելով մեր պետության աշխարհագրական դիրքը,տարածաշրջանային մարտահրավերները,բացի սա մեր երկրի համար ազգապահպանման տեսակետից առավել կարևոր է դառնում բուն ազգային արժեքների պահպանումն ու փոխանցումը:

Արժեքների փոխանցումը կատարվում է էթիկայի, բարոյագիտության միջոցով:Այս գիտությունը հետազոտում է մարդկային բարոյականության հետ կապված խնդիրները,այսինքն բարու և չարի,ճշտի և սխալի,արդարության և հարգանքի խնդիրները:Այս արժեքների վերաբերյալ պատկերացումների ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ և շարունակվում իրականացվել նրա ողջ կյանքի ընթացքում:Այդ գործընթացին մասնակցում են իհարկե առաջին հերթին

ընտանիքը,այնուհետև միջավայրը,տեղեկատվական տեխնոլոգիաները և երեխաների դաստիարակության ամենակարևոր և հիմնական օղակը՝ դպրոցը:

Մարդու կյանքում դպրոցական տարիքը այն շրջանն է, երբ դրվում են անձնային որակների, բարոյական զգացմունքների, գնահատումների հիմքերը: Երեխան սկսում է գնահատել ինչպես ուրիշի, այնպես էլ իր լավ ու վատ արարքները: Այդ գնահատումների հիմքի վրա երեխայի մոտ ծագում են ապրումներ, որոնք հետագայում վերածվում են դրական կամ բացասական սովորությունների, որոնք էլ կարող են արտահայտվել որպես արժեքներ: Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցական տարիքի երեխաների մեջ դաստիարակված հատկություններն ու բնավորության գծերը հետագայում վճռական ազդեցություն են ունենում նրա անձնավորության ձևավորման գործում: Դրա համար անհրաժեշտ է դեռ վաղ տարիքից մեծ ուշադրություն դարձնել նրա բարոյական դաստիարակությանը: Բարոյական դաստիարակության ընթացքը առաջին հերթին ենթադրում է բարոյական որակի ձևավորում: Բարոյական դաստիարկության ընթացքում, բարոյական գիտակցության հետ մեկտեղ ձևավորվում են անձնային կարևոր որակներ: Այդպիսի որակներից են, օրինակ, բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը, հավատարմությունը, ազնվությունը և այլն: Դպրոցական տարիքում նշված անձնային որակներն ու հատկությունները ձևավորելու տարբեր ուղիներ և մեխանիզմներ կան, սակայն ընդունված լավագույն միջոցներից մեկը սովորողի և գեղարվեստական գրականության, մասնավորապես հեքիաթի և առակի ամուր կապն ապահովելն է: Հեքիաթների և առակների դերը սովորողի զարգացման գործում բազմազան է. սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Հեքիաթը ,առակը ,սովորողներին մատչելի լեզվով կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին: Սովորողները ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, առակը,քան մեծահասակների դաստիարակչական քարոզները: Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել սովորողի երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթներն ընդլայնում են սովորողի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր, ձևավորվում է նաև հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն:

Դպրոցական տարիքում է ձևավորվում այնպիսի կարևոր զգացմունք, ինչպիսին է ապրումակցումը:Ապրումակցումը այն զգացմունքն է, որը հնարավորություն է տալիս երեխային իրապես ապրել հեքիաթի հերոսների կյանքով՝ տխրել, երբ հեքիաթի հերոսների հետ դժբախտություններ են կատարվում, իրենց վրա վերցնել հեքիաթի հերոսների կերպարն ու վարքագիծը, ինչն էլ արդեն դաստիարակչական մեծ նշանակություն է ստեղծում, որպեսզի իրական կյանում ևս իրենք կարողանան դրսևորվել անձնային դրական որակներ, հատկություններ:Այդ էմպաթիայի զգացողությունը հնարավորություն է տալիս տեղափոխելու իրական կյանք սովորողի այն դրական հատկություններն ու որակները, վարքի ընդունված ձևերը, որոնք գովերգվում են հեքիաթում:Եվ մեծահասակների օգնությամբ սովորողի մեջ ձևավորվում է հասարակայնորեն ընդունելի վարքի ձևեր և անձնային որակներ կամ դրվում են դրանց հիմքերը:

Այդպիսի վառ օրինակ է մեր օրերում Ադրբեջանի կողմից իննամսյա շրջափակումից հետո բռնի տեղահանված մեր հայրենակիցներին՝ Արցախցիներին,կազմակերպված,սրտացավ դիմավորումը,առաջին օգնություն ցուցաբերելը:Դրան ակտիվ մասնակցում էին նաև մեր երեխաները:Ապրումակցում իրենց հասակակից երեխաներին,սիրով ու հոգատարությամբ շրջապատում նրանց:Սա նույնպես արժեքային համակարգի բարձր մակարդակի մասին է վկայում:

Այսպիսով, արժեհամակարգի ձևավորումը իրենից ենթադրում է դժվարին,տևական,համբերատար աշխատանք:Եվ երբեք այս ոլորտում արդյունք ակնկալելը շուտափույթ կերպով և կարճ ժամանակներում սպասելի չէ:Այնպես որ չպետք է սպասել,որ եթե մենք այսօր ինչ-որ բան ենք անում,ինչ-որ զրույց ենք ունենում երեխայի հետ, օրինակ ազնվության մասին,սպասենք և տեսնենք,թե արդյոք մեկ շաբաթ հետո հասել ենք արդյունքի,թե ոչ:Ի տարբերություն ուսումնական նպատակների,երբ բացատրում և սովորեցնում ենք որևէ մաթեմատիկական բանաձև,ապա հստակ դնում որոշակի ժամանակ և գրավոր աշխատանքի միջոցով պարզում,թե արդյոք արդյունավետ էր մեր աշխատանքը,թե ոչ,հասել ենք մեր նպատակին,թե ոչ:Նույնը չի կարելի ասել իհարկե դաստիարակչական խնդիրների լուծման վերաբերյալ,որովհետև շատ ժամանակներում այդ խնդիրների լուծումը ,սովորողի արժեհամակարգի

ձևավորումը ակնհայտ է լինում շատ տարիներ հետո:Շատ դեպքերում մեր շրջանավարտները ,երբ մտնում են կյանք,երբ մենք լսում ենք նրանց հաջողությունների մասին,այդ պահին համոզվում ենք,որ իսկապես կարողացել ենք սովորողի մեջ ձևավորել արժեքներ:Իբրև վառ օրինակ կարող ենք բերել քառասունչորսօրյա պատերազմի հերոսներին:Գուցե այդ երիտասարդներից շատերը դպրոցական տարիներին աչքի չեն ընկել,չեն դրսևորել որոշակի արժեքներ,բայց երբ պահն եկավ,նրանք հատուցեցին իրենց կյանքով,նրանք գնացին այդ պայքարին և բնական է,որ նրանք կրում էին այդ արժանիքներն իրենց մեջ:Սա նշանակում է,որ երբեք չպետք է շտապել,որ այն ինչ որ մենք անում ենք մեր ուսումնական գործընթացի ընթացքում ամեն օր,ամեն ժամ,քայլ առ քայլ,կաթիլ առ կաթիլ,դա միևնույնն է իր արդյունքը տալու է գուցե և շատ տարիներ հետո,բայց անպայման ունենալու է իր դրական պտուղները:Այնպես որ այս աշխատանքում պետք է ունենալ մեծագույն համբերություն,նվիրում,համառ ջանքեր և հաստատ ցանկալի արդյունքը չի ուշանա:

Այսօր,առարկայական պահանջներն այնպիսին են,որ շատ դեպքերում ժամանակ չի մնում բարոյական նորմերին անդրադառնալ և դասի ընթացքում ուսուցիչն այնքան է տարվում առարկայական պահանջներով,որ կարող է չնկատել վերջին նստարանին նստած աշակերտի ապրումները,հուզերը:Եվ ահա այստեղ է,որ ուսուցիչը կարող է թույլ տալ վրիպումներ: Ուստի պետք է ամենայն ուշադրությամբ հետևել,որ դասաժամի ընթացքում ուսումնական և դաստիարակչական խնդիրները մեկտեղվեն,համընթաց զարգացում ստանան:Եվ այստեղ շատ կարևոր է,որ ուսուցչի աչքը լինի ամենատես,հոգին լինի ամենազգաց,իսկ միտքը՝ամենաընթաց:

Դասին ներկայացվող դաստիարակչական խնդիրներ

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել

հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» : Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը

ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:Եվ այսպես,դասին ներկայացվող դաստիարակչական խնդիրներն են.

1.Հաղորդակցական հմտությունների ձևավորում համագործակցային կարողությունների ձևավորում

- միմյանց լսելու,միմյանց կարծիքները գնահատելու կարողությունների ձևավորում
- .միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորում

2.Տարբեր ժողովուրդների լեզվի,մշակույթի,պատմության հանդեպ հարգալից վերաբերմունքի ձևավորում

- .ազգային ավանդույթների պահպանման անհրաժեշտության գիտակցում
- .հայրենիքի պաշտպանության գործում սեփական դերի գիտակցության ձևավորում

3.Գեղագիտական ճաշակի զարգացում

- .սեփական արժեքների,իրավունքների ու պարտականությունների գիտակցում

- .մայրենի լեզվի դերի և նշանակության գիտակցում
- .բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում

4.Առողջ ապրելակերպի,անձնական հիգիենայի,սեփական առողջության նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ձևավորում

- .ժամանակակից տեխնիկական միջոցների տիրապետման անհրաժեշտության գիտակցում,առօրյայում կիրառելու հմտությունների ձևավորում

5.Եվ վերջապես հաջորդ խնդիրը ուսումնասիրվող նյութի ազդեցությամբ ինքնաճանաչման,ինքնագնահատման հմտությունների խթանումն է:

Այսինքն յուրաքանչյուր նյութ,յուրաքանչյուր թեմա ուսումնասիրելիս պետք է կարողանալ թեման տանել այն գիտակցությանը,որ աշակերտներն այդ նյութի միջոցով տեսնեն իրենք իրենց,կարողանան արժևորել իրենց վերաբերմունքը,վերլուծեն,գնահատեն իրենք իրենց:

Ուսուցչի դերը արժեհամակարգի ձևավորման գործում

Քո ուսուցիչը նա չէ ,ով քեզ սովորեցնում է,այլ նա,ումից դու ինքդ ես սովորում Ռիչարդ Բախ

Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է:Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ,նույնիսկ փորձառու ուսուցչի համար: Դա կախված է մի շարք գործոններից,

1.սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից,

2.նպատակներից,ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրների լուծումից

3.ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից ,

4.դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից ,

5.սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու ՝ պատմության դասերի ուղղվածությունից,

6.դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից,

7. պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից,միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի պայմանների ստեղծումից , որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք

8.սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից,

9. ստեղծագործական ,զգացմունքային մթնոլորտի ձևավորումից ,որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա։

Եվ ի՞նչ կարող է անել ուսուցիչը,որ իր անձնական օրինակով նպաստի և աշակերտի մեջ ձևավորի որոշակի արժեքներ.

1.Դասն սկսել լավ տրամադրությամբ և ջերմ ողջույնով,որից աշակերտները

. կհասկանան,որ հանդիպումը շատ սպասված է

.կսովորեն,որ միմյանց պետք է դիմավորել սիրալիր

2.Նախքան դասին անցնելը համոզվել,որ բոլոր աշակերտներն են ներկա

.կհասկանան,որ յուրաքանչյուր աշակերտ կարևոր է ուսուցչի համար

.կսովորեն նկատել միմյանց,կարևորել յուրաքանչյուրի ներկայությունը

3.Հետևել դասասենյակի հիգիենիկ վիճակին

.կհասկանան,որ կարևոր է հիգիենիկ նորմերը

.կսովորեն մաքուր պահել շրջապատը

4.Հետևել ժամանակին

.կհասկանան,որ պետք է ճիշտ տնօրինել ժամանակը

.կսովորեն լինել ճշտապահ

5.Գնահատել աշակերտներին ըստ իրենց կարողությունների

.կհասկանան,որ ամեն մեկը հաջողակ է յուրովի

.կսովորեն վստահել սեփական ուժերին

Բոլորն են հանճար,բայց եթե դու դատես ձկանը ըստ նրա ծառ բարձրանալու ունակության,նա ողջ կյանքում կմտածի,որ հիմար է:

Ա.Էյնշտեյն

6.Հնարավորություն տալ երեխաներին մտածելու,վերլուծելու,արտահայտելու սեփական կարծիքը

.կհասկանան,որ ամեն ոք պետք է ունենա իր տեսակետը

.կսովորեն ունենալ ինքնուրույն դիրքորոշում

7.Ցանկացած դեպքում հիմնավորել գնահատականը

.կհասկանան,որ վաստակել են այդ գնահատականը

.կսովորեն հիմնավորել իրենց քայլերը

8.Հաճախակի ոգևորել աշակերտներին

.կհասկանան,որ կարևոր է ամենափոքր հաջողությունն անգամ

.կսովորեն փոքր քայլերով առաջ շարժվել

9.Բացատրել,որ <<վատ աշակերտ>>բոլորովին էլ չի նշանակում<<վատ մարդ>>

.կհասկանան,որ ուսուցչի համար բոլոր աշակերտները հավասար են իրենց մարդկային հատկանիշներով

.կսովորեն նախ լավ մարդ լինել,ապա լավ աշակերտ

10.Դասի սկզբում ներկայացնել դասի նպատակը,վերջում կատարել անդրադարձ

.կհասկանան ,որ ամեն գործում կարևոր է վերջնարդյունքը

.կսովորեն ,որ որևէ գործ պլանավորելուց առաջ պետք է ունենալ հստակ նպատակ

Եզրակացություն

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը անձի համակողման զարգացման կարևորագույն առանցքն է և նրա համալիր դաստիարակության վերջնարդյունքը

Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։ Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել։ Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել։ Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ։ Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք։ Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները։

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում։Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով։ Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա։

Եվ այսպես `

տարիների ընթացքում սովորեցնելով,կրթելով,դաստիարակելով,արժևորելով ,մենք կունենանք սովորող անհատ,որը բնության մի մասնիկն է և պետք է գնահատի այդ բնությունը։Գիտակցի,որ հասարակության լիիրավ անդամ է,լիիրավ քաղաքացի և պետք է նպաստի այդ հասարակության զարգացմանը։Գիտակցի,որ այդ հասարակության

զարգացումը իր հարազատ միջավայրի ծնունդն է:Մշտապես ցանկություն ունենա զարգացնել իր միտքը,ունակությունները,շարժվել ժամանակին համահունչ և զգալ ժամանակի տեմպը,որովհետև որքան էլ լինենք զարգացած և գիտելիքներով հարուստ,բայց չզգանք ժամանակի,կյանքի տեմպը՝մենք կմնանք այն տեղում,որտեղ ծնվել ենք:

Գրականության ցանկ

https://www.youtube.com/watch?v=b5DaD9ioSRs

Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:

Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ.:

Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում: